

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ. սեպտեմբերի 5-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ « դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Թամարա Սամսոնյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցի քննարկում:

1. Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Թամարա Սամսոնյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 9-րդ « դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն: Նախագահի թեկնածու առաջադրվեց Լիլիթ Պապյանը, որից հետո կատարվեց քվեարկություն, որի արդյունքում միաձայն նախագահ ընտրվեց Լիլիթ Պապյանը:

Որոշեցին. - 9-րդ « դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1. Լիլիթ Պապյան /նախագահ/
2. Նունե Աբրահամյան /անդամ/
3. Մելինե Սարգսյան /անդամ/
4. Ռուզան Պետրոսյան /անդամ/
5. Կարինե Մարտիրոսյան /անդամ/

2. Լսեցին.- 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Թամարա Սամսոնյանը՝ նշելով, որ այս տարի նոր ուսումնական տարում սահմանվում է հնգօրյա աշխատանքային ռեժիմ, դասեր սկսվում են 9:00-ին և ավարտվում են 15: 00- ին : Այս տարի աշակերտները պետք է հանձնեն ավարտական քննություններ: Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն

երեխաների ուսման հարցում, գրենական պիտույքների, համազգեստների և
հաճախումների նկատմամբ: Տեղեկացրեց նաև, որ 1-ին կիսամյակը բաղկացած է 15
շաբաթից:

Որոշեցին.- Առավել ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում: Պահել
ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը, անհրաժեշտության դեպքում մեծացնել երեխաների
վերահսկողությունը, որպեսզի կարողանան առավել արդյունավետ կազմակերպել
ուսումնական գործընթացը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ *Լ. ՊՆՏ* Լիլիթ Պապյան
Քարտուղար՝ *Ը. ՊՆՏ* Մելինե Սարգսյան